ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2026թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՀԱՄԼԵՏ ԹԱՄԱԶՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Կարապետ Ուլնեցու փողոցից սկսվող և գերեզմանատան հարակից տարածքով մինչև Էզրաս Հասրաթյան փողոց հասնող ճանապարհահատվածն անվանակոչել վիրաբույժ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Թամազյանի անվամբ՝ «Համլետ Թամազյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **ՀԱՅԿ ՄԻՐԶՈՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՀԱՄԼԵՏ ԹԱՄԱԶՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համլետ Թամազյանը ծնվել է 1947 թվականի մայիսի 1-ին, Թումանյանի շրջանի Ուզունլար (այժմ՝ Օձուն) գյուղում:

Ավարտել է Երևանի Ալեքսանդր Գրիբոյեդովի անվան հ.41 հիմնական դպրոցը, 1966-1972 թվականներին սովորել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետում:

1971-1972 թվականներին եղել է Երևանի № 2 բուժմիավորման բուժակ, 1972-1973 թվականներին՝ Ալավերդիի Կենտրոնական շրջանային հիվանդանոցի վիրաբույժ: 1973-1978 թվականներին գլխավորել է Ախթալայի շրջանային հիվանդանոցի վիրաբուժության բաժանմունքը՝ միաժամանակ 1977 թվականից եղել է վիրաբուժության գծով շրջանի գլխավոր մասնագետ: 1978 թվականի հոկտեմբերին ՀԽՍՀ ԱՆ ուղեգրով Թամազյանը մեկնել է Ալժիրի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետություն: 1978-1980 թվականներին եղել է Ալժիրի Սուկ-Ախրասի քաղաքի հիվանդանոցի գլխավոր վիրաբույժ: 1983 թվականին ակադեմիկոս Ա.Լ. Միքայելյանի հրավերով տեղափոխվել է աշխատելու ԽՍՀՄ Բժշկական գիտությունների Ակադեմիայի վիրաբուժության Համամիութենական գիտական կենտրոնի (ՎՀԳԿ) երևանյան մասնաճյուղում: Մինչև 1987 թվականը եղել է ԽՍՀՄ ԲԳԱ վիրաբուժության Համամիութենական գիտական կենտրոնի (ՎՀԳԿ) երևանյան մասնաճյուղի վիրաբուժական բաժանմունքի վարիչ, առաջատար գիտաշխատող, 1991 թվականից՝ «Հովհաննես Թումանյան» բարեգործական միության համանախագահ, 1991 թվականից՝ «Բանբեր Հայաստանի վիրաբուժության» հանդեսի գլխավոր խմբագիր, 1993-2000 թվականներին՝ Միքայելյանի անվան վիրաբուժական ինստիտուտի տնօրեն, 1994 թվականից՝ Առողջապահության ազգային ինստիտուտի վիրաբուժական նեղ մասնագիտությունների ամբիոնի վարիչ, նույն թվականից՝ Հայաստանի վիրաբույժների միության համանախագահ, 1998 թվականից՝ «Մանես» բարեգործական հիմնադրամի հիմնադիր, 1993 թվականից՝ Ֆրանսիայի հայ բժիշկների միության անդամ (UMAF), Ռուսաստանի վիրաբույժների միության անդամ, 1994 թվականից՝ բռնցքամարտի միջազգային ֆեդերացիայի բժշկական հանձնաժողովի անդամ և Հայաստանի բռնցքամարտի ֆեդերացիայի բժշկական հանձնաժողովի նախագահ, 1996 թվականից՝ Մխիթար Հերացու անվան ԵՊԲՀ վիրաբուժական մասնագիտական գիտական խորհրդի անդամ, 1996 թվականից՝ Էնդոսկոպիկ վիրաբուժության հայկական ընկերության իսկական անդամ, 1997 թվականից՝ Վնասվածքաբանության և անհետաձգելի վիրաբուժական բժշկական օգնության Եվրոպական միության անդամ, 1997 թվականից՝ Վրաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, 1997 թվականից՝

«Երկիր Նաիրի» բարեգործական կազմակերպության պատվավոր անդամ, 1998 թվականից՝ ՀՀ ԱՆ վիրաբուժության Արտոնագրային հանձնաժողովի անդամ, 1998 թվականից՝ Հայաստանի փոխպատվաստաբանների (տրանսպլանտոլոգների) միության նախագահ, 2001 թվականից՝ վերածևավորված «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ-ի ղեկավար:

2003-2007 թվականներին եղել է ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, սոցիալական, առողջապահական, բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ: 2007 թվականից՝ Կենսոլորտի (էկոլոգիայի), արվեստի և ճարտարապետության Միջազգային ակադեմիայի UNIECOFOR LLC իսկական անդամ (ակադեմիկոս), 2007 թվականից՝ «Լոռվա ձոր» հասարակական կազմակերպության ղեկավար անդամ:

2012 թվականին Օձուն գյուղում տեղադրվել է Համլետ Թամազյանի կիսանդրին (քանդակագործ՝ Սևո (Սարգիս Ղարիբյան)):

Օձունի բժշկական ամբուլատորիան և փողոցներից մեկը կրում են Համլետ Թամազյանի անունը:

«Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ-ի առաջին հարկում գործում է թանգարան, որտեղ ցուցադրվում են Թամազյանի մասին պատմող գրքեր, լուսանկարներ, նրա անձնական իրերը:

«Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ-ի բակում տեղադրվել է Համլետ Թամազյանի կիսանդրին (ճարտարապետ՝ Արմեն Թադևոսյան, քանդակագործներ՝ Յուրի և Դավիթ Մինասյաններ):

Հ. Թամազյանը պարգևատրվել է մի շարք մեդալներով և շքանշաններով, արժանացել է Ալավերդի քաղաքի և Օձունի պատվավոր քաղաքացի կոչմանը:

Հեղինակ է 231 գիտական աշխատանքների, այդ թվում 12 մենագրությունների: Նրա ղեկավարությամբ իրականցվել ու պաշտպանվել է 8 դոկտորական և 37 թեկնածուական ատենախոսություն:

Համլետ Թամազյանը մահացել է 2011թ. փետրվարի 28-ին:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 17-րդ կետը՝ առաջարկվում է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Կարապետ Ուլնեցու փողոցից սկսվող և գերեզմանատան հարակից տարածքով մինչև Էզրաս Հասրաթյան փողոց հասնող ճանապարհահատվածն անվանակոչել վիրաբույժ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Թամազյանի անվամբ՝ «Համլետ Թամազյան փողոց»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի

N2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԿ ՄԻՐԶՈՅԱՆ